ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 301 – Ա **12 ապրիլի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 183 – Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի Ն< 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով ստեղծելու և ներմարզային երթուղիների չվացուցակները հաստատելու մասին>> N 183 – Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Ստեղծել ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Կարեն	– մարզպետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Բաղդասարյան Կարեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ
Գրիգորյան Գրիգոր	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ
Ղազարյան Մանուկ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի կրտսեր մասնագետ

Հակոբյան Արտյոմ - ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության Սևանի հաշվառման-քննական բաժանմունքի տեսուչ /համաձայնությամբ/

Ստեփանյան Գոռ - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ /համաձայնությամբ/>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶ[illegible] ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ